Թիւ 1 1927

## ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ, ԱՍՏՈՒԱԾ...(A)

Հայոց մայրեր, խաչիդ տակը տըքալէն,
Գողգոթային բարձունքն ի վեր կը քալեն։
'Թէ կը տեսնես, որ կ'ընկնուին մեր մայրեր,
Խաչիդ ծայրէն քիչ մը գոնէ չե՞ս բռներ...։

Մինչեւ ե՞րբ, Աստուած,
Արհաւիրք, կոծ ու լաց։

## ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ, ԱՍՏՈՒԱԾ...(B)

Հայոց կոյսեր, գերեվարեալ վատօրէն,
Պղծուեցան Մուհամմէտի իժերէն։
'Թէ «Մի՛ շընար» Տասնաբանեան մեզ կ'ըսէր,
Շանց վոհմակներն ուրեմն ինչո՞ւ չես պատժեր...։

Մինչեւ ե՞րբ, Աստուած,
Արհաւիրք, կոծ ու լաց։

## ԱԼԷՉԱՐՉԱՐ

Ալէչարչար նաւի նըման,
Ծովէ ի ծով հալածական,
Կը դեգերիս գիշեր ցորեկ,
Ազգըդ Հայոց Արարատեան։

Մարդիկ Աստուած քեզ ուրացան,
Սիրտերն իրենց ա՛լ քարացան,
Ազատութեան հէ՛ք սիրահար,
Յոյսդ է միակ սուր հըրացան։

## ՅՈՅՍԸ

Թո՛ղ փըչէ քամին պաղ պաղ երեսիս,
վերէն ամպերէն սաստիկ ձիւն տեղայ,
Որքան որ ուզէ՝ թո՛ղ փըչէ հիւսիս...
Յուսով եմ՝ վաղ ուշ՝ գարունը կուգայ։

Թուխպը թող պատէ երկինքը պայծառ,
Արեգակն արփի խաւար թող դառնայ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար...
Յուսով եմ՝ վաղ ուշ՝ գարունը կուգայ։

## ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ

խորհուրդ մեծ եւ սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ։
Այսօր տօն է սուրբ ծընընդեան, աւետի՛ս։
—Քրիստոս ծընաւ եւ յայտնեցաւ։

## Ո՞Վ ԵՍ ԴՈՒՆ

Ո՞վ ես դուն, որ կ'անցնիս քովէս ամէն օր,
Եւ ամէն օր նազանքներով նորանոր,
—Ո՞վ ես դուն։

Ո՞վ ես դուն, որ ինձ կը նայիս յանդիման
Խորհրդաւոր ծով աչքերով աննըման,
—Ո՞վ ես դուն։

Ո՞վ ես դուն, որ ինձ կը ժպտիս գողունի
Համակ դէմքովդ երկնապարգեւ գեղունի,
—Ո՞վ ես դուն։

## ԻՆՃԻԼԻԿ, ՓՈՒՆՋՈՒԼԻԿ

Սարէն կուգայ ձիաւոր, վայ լէ՛, լէ՛...
Մեր տունը չարտախաւոր...
Ինճիլիկ, փունջուլիկ, կարճուլի՛կ եար,
Ինճիլիկ, փունջուլիկ, անուշի՛կ եար...

Սարերի հովին մեռնեմ,
Իմ եարի պօյին մեռնեմ,
Էս օր օխտն օր չեմ տեսեր,
Տեսնօղի աչքին մեռնեմ։

## ՍԻՕՆԻ ՈՐԴԻՔ

Սիօնի որդիք, զարթիք,
Հարսին լուսոյ տուք աւետիք,
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ,
Գայ պըսակէ ըզքեզ փառօք,
Ե՛լ ընդ առաջ պըճնեալ զարդուք,
Երգեա՛ երգ նոր յարուցելոյն
Նըճջեցելոց կենաց պըտղոյն։

## ԱՐՕ՛Ր, ԱՐՕՐ

Արօ՛ր, արօր, խիզախ արօր,
Հերկէ խորշէ մտքերն յար օր։
Խոփիդ մատաղ դաշտ ու ծործոր,
Վարէ հորդէ ակօսներ նոր։
—Քրտնաթո՛ր արօր։

Փշրէ՛ արօր կըտո՛ր կըտոր
Հողերն յուրթի արտերուն, որ
Տուին մեզի երէկ այսօր
Զամիչ, սալոր, թուզ եւ խնձոր։
—Բեղմնաւո՛ր արօր։

## ՀԱՅՐ ՄԵՐ

Հայր մեր, որ յերկինս,
Սուրբ եղեցի անուն քո։
Եկեսցէ արքայութիւն քո,
Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի։

զՀաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։
Թո՛ղ մեզ ըզ պարտիս մեր՝
Որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա՛ ի չարէ։

**ԳԻՆ՝ 10 ՍԷՆԹ**

COPYRIGHT, 1927, BY K. PROFF-KALFAIAN.

YANKEE PRESS
2016 MAPLE AVENUE
LOS ANGELES